ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» 05 2024 թվականի N 05-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին և 4-րդ կետերը, «Հայաստանի Հանրապետության ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1-րդ կետի 6-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում փոփոխություն կատարելը և այդ նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից 2024 թվականի իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին» N 14-Լ որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 581-րդ, 583-586-րդ, 588-րդ, 590-րդ, 592-594-րդ, 597-րդ, 599-րդ, 601-րդ, 605-րդ, 606-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած,

2) 343-րդ, 372-րդ, 428-րդ, 445-րդ, 455-րդ կետերի «Ռիսկայնությունը» սյունակում լրացնել «Ցածր» բառով, «Ստուգման ժամանակահատվածը» սյունակում լրացնել «4-րդ եռամսյակ» բառերով իսկ «Ոլորտ» սյունակում լրացնել «Բուժ» բառով,

3) 349-րդ, 354-րդ, 782-րդ կետերի «Ռիսկայնությունը» սյունակում լրացնել «Ցածր» բառով իսկ «Ոլորտ» սյունակում լրացնել «Բուժ» բառով,

4) 446-րդ կետի «Ռիսկայնությունը» սյունակում լրացնել «Ցածր» բառով, «Ստուգման ժամանակահատվածը» սյունակում «2-րդ եռամսյակ» բառերը փոխարինել «3-րդ եռամսյակ» բառերով իսկ «Ոլորտ» սյունակում լրացնել «Բուժ» բառով,

5) 359-րդ և 483-րդ կետերի «Ռիսկայնությունը» սյունակում «Ցածր» բառը հանել, «Ոլորտ» սյունակում «Բուժ» բառը հանել,

6) լրացնել 798-805-րդ կետերով համաձայն հավելվածի:

2. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2024 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն:

3. Սույն որոշման 1-ին կետը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության վարչապետի համաձայնությունը ստանալուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ